Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17569-
17573

370.1
F.34

13

2001

8674 U7

Գրք. 26 1875։

Համառօտեալ Հոգի.

ԱԶԴ

Այս Քրիստոնէական՝ որ Ազգային Կրօնական ժողովոյն հաւանութեամբը մեր արդէն երկրորդական վարժարանաց համար պատրաստած միջակ Քրիստոնէական վարդապետութենէն համառօտուած է, բաւական կը պարունակէ իր մէջը նորուս համբակաց ամենահարկաւոր ուսանելիքները, որով նախակրթական վարժարանի տղայք ալ կը ընան իրենց պէտքին չափ տեղեկութիւն ստանալ Քրիստոնէական կրօնքին վրայօք, և անոր հակառակ մոլորութիւններէն պահպանուիլ շնորհօքն Աստուծոյ։

5. Հ. Աներևոյթ բաներ ըսածդ ի՞նչ են։

Պ. Մարդոյ հոգին. Հրեշտակները և Սատանաները. որոնք ոչ կը տեսնուին, ոչ կը շօշափուին, և ոչ ձայն ունին որ լսուի. և չեն ալ մեռնիր։

6. Հ. Մարդուս հոգին ի՞նչ է։

Պ. Մարմնոյն հետ միանալով անոր կենդանութիւն և խորհելու և խօսելու կարողութիւն տուող էակն է. որուն զատուելովը մարմինը կը մեռնի, բայց ինքը հոգին չը մեռնիր։

7. Հ. Հրեշտակներն ի՞նչ են։

Պ. Աստուծոյ յատկապէս իրեն ըսպասաւորելու համար ստեղծած անմարմին էակներն են. որ միշտ Աստուծոյ առաջն են։

8. Հ. Աստոց սպասաւորութիւնն ի՞նչ է։

Պ. Աստուծոյ կամքը անոր հրամանովը մարդոց իմացընել. և մեղքի մէջ իյնալու որոգայթներէ և վտանգութիւններէ ալ մարդիկ պահպանել։

9. Հ. Հրեշտակներն որ աներևոյթ են ի՞նչպէս կրնան մարդոց իմացնել Աստուծոյ հրամանը։

Պ. Մարդոց քունին մէջ. յաստուկ

տեսիլք ցուցընելով. շատ անգամ ալ իրենք մարդու կերպարանք առած երևնալով և խօսելով։

10. Հ. Սատանաները ի՞նչ են։

Պ. Իրենց հպարտութեան մեղքովը Աստուծոյ աչքէն ինկած և հրեշտակներուն մէջէն վրնտուած և յաւիտենական պատժոյ մատնուած չար հրեշտակներ են։

11. Հ. Ուրեմն մարդոյ հետ ասոնց յարաբերութիւնը կըտրած է։

Պ. Չէ. ասոնք ալ իրենց չարութենէն մարդիկ խաբելու և մեղքի մէջ ձգելու կը պըտրտին, որ իրենց պէս Աստուծոյ շնորհքէն զրկել տալով իրենց գերի ընեն։

12. Հ. Երեւելի ստեղծուածները որո՞նք են։

Պ. Երկինք և երկիրս, և ի՛նչ որ ասոնց մէջ զգայի՝ այսինքն տեսնելու և շօշափուելու և կամ լսուելու յարմար բաներ կան։

13. Հ. Այս բոլոր եղածները Աստուած ի՞նչ բանէ ստեղծեց։

Պ. Ասոնցմէ առաջ բան չկար. չըկայէն ստեղծեց. ուրիշ բանէ մը գոյացընելու՝ ստեղծած չէր ըլլար։

14. Հ. Ինչո՞ւ համար ստեղծեց։

Պ. Մարդոյ մարմնոյ և հոգւոյ պէտքերուն ծառայելու համար։

15. Հ. Մարդս ինչո՞ւ ստեղծեց։

Պ. Զինքը սիրելու. իր տուրբ կամքը ճանչնալու և կատարելու. և անմահ կեանք ժառանգելով չար հրեշտակներուն տեղը լեցընելու համար։

ԳԼՈՒԽ Բ.

16. Հ. Աստուծոյ կամքն ի՞նչ է։

Պ. Ցայտնած ճշմարտութիւններուն հաւատալ և տուած պատուէրները կատարել։

17. Հ. Այդ ճշմարտութիւնները և պատուէրները որո՞ւ յայտնեց։

Պ. Նախ Ադամայ և Եւայի, որ առաջին ստեղծուած մարդիկը և բոլոր մարդոց նախածընողն են. և անոնցմէ ալ յորդւոց որդի աւանդելով շարունակուեցաւ։

18. Հ. Ե՞րբ յայտնեց ասոնց։

Պ. Երբ որ սատանային խաբելովը

Աստուծոյ դէմ անհնազանդութեան մեղք գործելուն համար դըրախտէն վռընտուելոյն և երկնային կեանքին վիճակը կորսընցուցին։

19. Հ. Ինչո՞ւ համար յայտնեց։

Պ. Իրենց այն երանական շընորհքէն զրկուելուն համար եկած յուսահատութենէն մխիթարելու և յաւիտենական երջանկութեան ճամբան ցուցընելու համար։

20. Հ. Այլ ուրիշ որո՞ւ յայտնած է Աստուած։

Պ. Ադամէն սովրածները մատուցելու սկսեցին նէ՝ ատեն ատեն իրեն ընտրած մարդոյ միջոցաւ ալ յայտնեց. որ մարգարէ ըսուելոյն։

21. Հ. Այդ ճշմարտութիւնները և պատուէրները Աստուծմէ յայտնուած ըլլալը ինչէ՞ն կըստուգուի։

Պ. Որու որ յայտնուի նէ, անիկայ սա երկու աստուածային շնորհքէն գոնէ մէկը պիտի ունենայ. հրաշք և մարգարէութիւն։

22. Հ. Հրաշքն ի՞նչ է։

Պ. Բնական կերպով ըլլալը անհնար եղած բանին իրօք ըլլալն է։

23. Հ. Այդպէս ի՞նչ բան կըրնայ ըլլալ։

Պ. Աստուծոյ ամենակարող զօրութեամբը շատ եղածներ կան. ինչպէս կըրակը ձգուած մարդու չայրիլը, մեռելին նորէն ողջենալը, հիւանդին մէկէն վրան ոկարութեան նշան չմնալով բժշկուիլը, որ հիմայ ալ ատեն ատեն կըլլայ. եայլն եայլն։

24. Հ. Մարգարէութիւնն ի՞նչ է։

Պ. Ըլլալիք բաները ասղիներով առաջ իմացընել, կամ շատ հին ատենները կամ հեռու տեղեր եղած բան մը մարդէ մը չիմացած ճիշդ պատմել։

25. Հ. Մարգարէները այդ շնորհքները ունէի՞ն։

Պ. Այո՛. և անոնց մէջ ատեն ատեն հրաշք ընողներ ալ եղան, և ամէնն ալ ետքէն ըլլալիք կերպ կերպ բաներ դուշակեցին. և յատկապէս Քրիստոսի աշխարհք գալը և ինչ ընելը։ Մովսէս մարգարէն ալ աշխարհի ինչպէս ստեղծուիլը պատմեց։

26. Հ. Անոնց յայտնուած բաները գրուած կա՞ն։

Պ. Այո՛. սուրբ գրքերուն մէջ գրուած են. որոնք Աստուծոյ յայտնած խօսքերը պարունակելնուն համար Աստուածաշունչ կըսուին, և երկու կարգ են. Հին կտակարան. Նոր կտակարան։

27. Հ. Հին կտակարանը ի՞նչ է։

Պ. Քրիստոսի աշխարհ գալէն առաջ մարգարէներուն գրած պատմութիւններն ու դուշակութիւններն են։

28. Հ. Այդ կարգի գիրքերը որո՞նք են։

Պ. Ասոնք. Ծնունդք. Ելք. Ղևտականք. Թիւք. երկրորդ Օրինաց. Յեսու. Դատաւորք. Հռութ. Թագաւորաց չորս գիրք. Մնացորդաց երկու գիրք. Նէեմի. Եզրասայ երկու գիրք. Եսթեր. Յուդիթ. Տոբիթ. Մակաբայեցւոց երեք գիրք. Յոբ. Սաղմոս. Առակք. Ժողովող. Երգ երգոց. Իմաստութիւն. Սիրաք. Եսայի. Երեմիա. Բարուք. Դանիէլ։ Եզեկիէլ. և տասն երկու փոքր Մարգարէները. ընդ ամենը քառասուն և եօթն գիրք։

29. Հ. Նոր կտակարանն ի՞նչ է։

Պ. Քրիստոսի աշխարհ գալէն եռքը գրուածներն են. որ անոր և իր աշակերտներուն պատմութիւնը և քարոզած ճշմա-

աստիւնները և խրատները կը պարունակեն։

30. Հ. Նոր կտակարանի գրքերն որո՞նք են։

Պ. Անոնք են. չորս աւետարան Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու. Գործք առաքելոց. Յակոբու և Յուդայի մէկ մէկ. Պետրոսի երկու և Յովհաննու երեք կաթուղիկէական գրքերը. Պօղոս առաքելոյ տասն և չորս թուղթերը և Յովհաննու յայտնութիւնը. ընդ ամենը քսան և եօթն գիրք։

ԳԼՈՒԽ Գ.

31. Հ. Աստուածաշունչին մէջը գրուածէն զատ ճշմարտութիւն չկա՞յ մի։

Պ. Կան անանկ ճշմարտութիւններ ալ որ Աստուծմէ յայտնուած են. բայց ակիզբէն բերնէ բերան կաւանդուէր։ ետքը քանի պէտք եղաւ նէ գրի առնուեցան. որ կըսուի Աստուածային աւանդութիւն։

32. Հ. Այս աւանդութիւններուն ճը շմարիտ ըլլալը ինչէ՞ն կը հասկցուի։

Պ. Քրիստոսի աշակերտներուն օրէն մինչև հիմա ասոնց հաստատ և անխափան աշխարհիս ամէն տեղը բոլոր քրիստոնեաներէն միօրինակբռնուած ըլլալէն յայտնի է։

33. Հ. Աստուածաշունչդիրքը և աւանդութիւնը ի՞նչ ճշմարտութիւն կը սորվեցընեն։

Պ. Գլխաւորապէս երկու ճշմարտու-

թիւն, որոյմէ կը ծագին ուրիշ ամէն հաւատալի ճշմարտութիւնները։

34. Հ. Ասոնց առաջինը ո՞րն է.

Պ. Ասյս է. Աստուած մը կայ, որ ոչ սկիզբ ունի եւ ոչ վերջ. ինք մէկէ մը ստեղծուած չէ և ամէն բանի ստեղծողը ինքն է։

35. Հ. Աստուած մը կայ ըսածդ՝ Աստուած մէ՞կ է ըսել պիտի ըլլայ։

Պ. Ասյո՛. Աստուած մէկ է և մէկէն աւելի չըլլար։ և երեք անձն է. Հայր և Որդի և Հոգի սուրբ, և այս երեքանձնեայ մի աստուծութիւնը կըսուի Սմենասուրբ Երրորդութիւն։

36. Հ. Հայր և որդի ըսածդ մարդոց մէջ հասկըցուածին պէ՞ս իմանալու է։

Պ. Զէ՛. մարդոյս միտքէն իմաստ ծնածին պէս է Հօր Աստուծոյ իր որդին ծնանիլը։

37. Հ. Ուրեմն որդին Աստուած Հօր Աստուծոյ իմաստութիւնն է։

Պ. Ասյո՛. և ասոր համար Որդին Աստուած բան Աստուծոյ և բանն Աստուած ալ կըսուի. և քանի որ Հայր Աստուած կայ՝ Որդին Աստուած ալ կայ

և անկէց երբէք չբաժնուիր։

38. Հ. Հոգին սուրբ ի՞նչ է։

Պ. Աստուծոյ շունչն է. Հայր Աստուածէն և Որդի Աստուածէն անբաժանելի կատարեալ Աստուած է, և քանի որ Հայր և Որդի կան. Հոգին սուրբ ալ կայ։

39. Հ. Երկրորդ գլխաւոր ճշմարտութիւնը ո՞րն է։

Պ. Այն է, որ բոլոր մարդիկ Ադամայ մեղքէն և անոր պատիժէն ազատելու համար Որդին Աստուած մարդ եղաւ։

40. Հ. Ադամայ մեղքը ի՞նչպէս բոլոր մարդոց անցաւ որ ամէնն ալ պատժոյ արժանի եղան։

Պ. Ադամ և Եւա իրենց սերունդին անցնելու համար աստուծմէ առած շնորհքնին կորսնցուցին նէ, մեղքին պատճառաց տկարութիւնը սերնդոցը անցաւ. ինչպէս որ ծնողաց բնաւորուած հիւանդութիւնը իրենց տղոցը կանցնի։

41. Հ. Ի՞նչ տկարութիւն էր այն։

Պ. Այն է, որ մարդ բարի գործը կը ճանչնայ և ընելու կը փափաքի. բայց ասոր հակառակն ընելու՝ իր աւրուած բնութենէն և սատանայի փորձութիւններ-

ըէն կը բռնադատուի։

42. Հ. Այս բռնութենէս ի՞նչպէս կազատուի։

Պ. Մի միայն որդւոյն Աստուծոյ մարդանալովը մարդկային ազգի ուսած շնորհքին զօրութեամբը կրնայ ազատուիլ։

43. Հ. Աստուծոյ մարդանալ ըսածդ՝ հրեշտակներուն մարդու կերպարանք առած երեւնալուն պէ՞ս հասկընալու է։

Պ. Չէ՝ · ճշմարիտ մարդոյ մարմին և հոգի և միտք առաւ և իր աստուածային անձինը վրայ միացուց. որով աստուածութեանը հետ մարդկային բնութիւնն ալ կատարեալ ունեցաւ մի և նոյն Որդին Աստուած։

44. Հ. Ինչո՞ւ հրեշտակներուն պէս չերեւցաւ. այլ ճշմարիտ մարդ եղաւ։

Պ. Ադամայ մեղքը քաւելու հա-

մար անմեղ մը զոհուիլ և մեռնիլ պէտք էր. լոկ կերպարանքով երեւոյթը չը կըրնար իրօք մեռնիլ. ուստի զոհ ալ չը կըրնար ըլլալ։

2979
40

ԳԼՈՒԽ Դ։

45. Հ. Որդին Աստուած ճշմարիտ մարդ եղաւ նէ մէկէ մը ծնած ըլլալու է։

Պ. Այո՛, սուրբ Մարիամ կուսէն. անիկայ միշտ կոյս մնալով Հոգւոյն սրբոյ գործակցութեամբը մարմին առաւ և ծնաւ Բեթղեհէմ քաղաքին մէջ, և ծնեալն Աստուած ըլլալուն սուրբ կոյսն ալ Աստուածածին կըսուի։

46. Հ. Ծնած ատենը անունը ի՞նչ դըրուեցաւ։

Պ. Ինչպէս որ հրեշտակի ձեռօք պատուէր եղած էր՝ Յիսուս կոչուեցաւ, որ փրկիչ ըսել է. վասն զի մարդիկ սատանայի գերութենէն ազատելու համար աշխարհ գալու փրկիչը և Աստուծոյ որդին ինքն էր։

46. Հ. Հապա աշխարհի ակնկալած փրկչին անունը Քրիստոս ըսին։

Պ. Աստուծոյ յայտնելովը մարգա-

բէներէն տրուած անունը Մեսիա էր, որ Քրիստոս կը թարգմանի և օծեալ ըսել է։ Վասն զի մարդկային բնութիւնը իր աստուածութեանը հետ միաւորելով օծուեցաւ սրբբեցաւ։

48. Հ. Յիսուս Քրիստոս աշխարհիս վրայ ինչպէ՞ս կեանք վարեց։

Պ. Ինքն Աստուած և մարդ ըլլալով երբեմն աստուածապէս և երբեմն մարդկապէս կը գործէր ինչպէս որ կուզէր։

49. Հ. Աստուածապէս գործածները ի՞նչ են։

Պ. Ծնած առենէն մինչև մահուանն առենը երեսուն և երեք տարի ու կէսի մօտ շատ հրաշքներ ըրաւ, հին օրէնքն ալ աւելի կատարեալ օրէնքի փոխեց. կրօնական նոր արարողութիւններ սահմանեց. և քանի մ'անդամ ալ իր Աստուածային փառքը յայտնի ցուցուց։

50. Հ. Ի՞նչ էր ըրած հրաշքները։

Պ. Քոսոտները ու բորոտները ըժշկեց. կաղերը քալեցուց. անդամալոյծները ողջնցուց. կուրերու աչք բացաւ. մեռելները յարոյց. և այլն և այլն։

51. Հ. Աստուածութեան փառքը ե՞րբ յայտնեց։

Պ. Թէպէտ նոր ծնած տաեղը երկինքէն հրեշտակներուն փառք ի բարձունս երգելը, և մոգերուն արևելքէն յատուկ աստղի մը առաջնորդելովը գալ երկրպագութիւն ընելը իր աստուածութիւնը յայտնելու համար էր։ Բայց աւելի յայտնեցաւ Յորդանան և Թափօր լեռը։

52. Հ. Յորդանանու մէջ ինչպէ՞ս յայտնեցաւ։

Պ. Քրիստոս իր երեսներորդ տարեւոյն սկիզբը սուրբ Յովհաննէս Կարապետէն մկրտուելուն համար Յորդանան գետը մտած տաեղը Հոգին սուրբ երկինքէն աղաւնակերպ վրան իջաւ. և Հայր Աստուած ալ դա է որդի իմ սիրելի ըսելով Որդի Աստուծոյ ըլլալը վկայեց։

53. Հ. Թափօր լեռը եղած յայտնութիւնն ի՞նչ էր։



Պ. Հոն աղօթքի կանգնած առնելը յանկարծ հանդերձը ճիւնէն ճերմակ և երեսը արևու պէս պայծառակերպեցաւ. Մովսէս և Եղիա մարգարէներն ալ քովը կանգնած դտնուեցան. Հոգին սուրբ լուսաւոր ամպոյ նման հովանացաւ, և Հայր Աստուած ալ երկինքէն դարձեալ վկայեց թէ դա է որդի իմ սիրելի դմա լուարուք։

51. Հ. Քրիստոս Յիսուս մարդկապէս ի՞նչ գործեց։

Պ. Իր հրէական ազգին տրուած Մովսիսական օրէնքներն ամէնն ալ կատարեց. և մարդոց Ադամայ մեղաց հեռուութեամբ ժառանգած պատիժները քաշեց՝ ինք բնաւ մեղք չունենալով։

55. Հ. Ի՞նչ բան էր քաշածը։

Պ. Յոգնեցաւ, անօթեցաւ ծարաւեցաւ. տրտմեցաւ. լացաւ հրեայներէն նախատինք կրեց. հեթանոսներու մատ-

նուելով չարչարանօք խաչուեցաւ ու խաչին վրայ մեռաւ։

56. Հ. Քրիստոս որ Աստուած էր՝ ինչպէս չարչարեցաւ և մեռաւ։

Պ. Աստուած ըլլալով անչարչարելի և անմահ էր, անոր համար մահկանացու մարմին առաւ և նոյն մարմնովը մեռաւ և մարմինը Աստուծոյ մարմին ըլլալով անոր մեռնիլը մարդոց փրկութիւն եղաւ։

57. Հ. Ինչպէ՛ս փրկեց մարդիկ։

Պ. Մարմնովը երեք օր գերեզմանը մնացած առենը հոգւովը դժոխքն իջաւ.

ԳԼՈՒԽ Ե.

61. Հ. Եկեղեցի ասելով ինչ կըհասկընամք։

Պ. Այլ և այլ ազգէ՝ մի և նոյն քրիստոնէական հաւատք ունեցող մարդոց միութիւնը, որ առաքելոց քարոզութիւնները և անոնց յաջորդ եղող հայրապետաց աւանդութիւնները ընդուներ կը պահեն անփոփոխ Հոգւոյն սրբոյ զօրութեամբ, ընդհանրական և առաքելական Եկեղեցի կըսուի։

62. Հ. Հոգին սուրբ ի՞նչ ներգործութիւն ունի Եկեղեցւոյն հաստատ մնալուն համար։

Պ. Նոյն ինքն եկեղեցիէն չբաժնըւելով կառաջնորդէ միշտ. որ հաւատոյ ճշմարտութիւնները անեղծ և անպակաս մնան, որով եկեղեցին ընաւ սուտ և սխալ չկրնար սորվեցընել։

63. Հ. Եկեղեցին այդ ճշմարտութիւնները ո՞ւր կը սորվեցնէ։

Պ. Հաւատոյ հանգանակին մէջ, որ առաքելոց բերնով և գրով սորվեցուցածներէն համառօտած դաւանութիւն մըն է, և միշտ եկեղեցւոյ մէջ կը կարդացուի։

64. Հ. Ո՞րն է այդ հանգանակը։

Պ. Այս է. "Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ յարարիչն երկրի և երկրի, երևելեաց և աներեւութից։ Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծընունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերայ երկրի, երեւելիք և աներեւոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարեալապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւոյն սրբով։ Որով էառ մարմին հոգի և միտ, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Զարչարեալ խաչեալ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, երկեալ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր իդատեալ զկենդանիս և ըղմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք խոստովք Հոգին

Ադամայ մեղքին համար սատանայի գերի եղած արդարները անկէց ազատեց, և ամէն մարդու ալ իրեն մահուանը հաղորդ ըլլալով փրկուելու ճամբայ բացաւ։

58. Հ. Երեք օր մարմինը գերեզման մնալէն ետքը ի՞նչ եղաւ։

Պ. Յարեաւ և իրեն հաւատացողներուն երևցաւ. և քառասուն օր ալ իր Ս.ռաքեալ անուանած աշակերտներուն հետ մնալով և խօսելով և սեղանակից ըլլալով ճշմարտապէս յարութիւն առած ըլլալը ստուգեց։

59. Հ. Ի՞նչ խօսեցաւ Ս.ռաքելոց հետ։

Պ. Պատուիրեց որ իր հաւատքը և պատուէրները բոլոր աշխարհ քարոզեն, և սուրբ կարգադրութիւններովը եկեղեցի հիմնեն, որուն միշտ հաստատ մնալուն համար ալ, Հոգին սուրբ ղրկել խոս-

ՔԱՌԱՍՈՒՆ։

60. Հ. ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԷՆ ԵՏՔԸ Ի՞ՆՉ ԸՐԱՒ։

Պ. Ս. Աստուածածնի աչքին առաջը երկինք համբարձաւ. Հօր Ս. Սուրբ աջ կողմը նստաւ։ Եւ աշխարհիս վերջը կենդանիներն ու մեռեալները դատելու համար նոյն մարմնովը նորէն գալու է։

յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և իմարդարէս և յաւետարանս։ Որ էջն ի յորդանան. քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ ի սուրբսն։ Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի. իմի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանան յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ Հոգի, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ Եկեղեցի։

65. Հ. Այդ հանգանակին մէջ՝ հաւատամք իմի միայն եկեղեցի ասէր. մէկէն աւելի եկեղեցի չըլլար։

Պ. Զէ՛, որովհետև ճշմարիտ հաւատքն ալ՝ որ եկեղեցիին հիմն է, մէկէն աւելի չըլլար։

66. Հ. Հապա այլ և այլ եկեղեցիներու անուն կը տրուի նէ անոնք ինչ են։

Պ. Հաւատոյ դաւանութեամբ միաբան եղող ամէն ազգի ժողովուրդ մէկ գլխոյ անդամ կըլլան. և ընդհանրական եկեղեցի մը կը կազմեն. ուստի անոնց ամէն մէկին ալ եկեղեցի կըսուի, նոյն ընդհանրական եկեղեցւոյ մասն ըլլալու մտքով։

67. Հ. Այս ընդհանրական եկեղեցւոյ գլուխն ո՞վ է։

Պ. Նոյն իսկ եկեղեցւոյ հիմնադիր, Քրիստոս տէրն մեր. որ երկինք համբարձած ատենը իրեն փոխանորդ դրաւ առաքեալները։

68. Հ. Քրիստոս ամենակարող Աստուած ըլլալով ի՞նչ կարօտութիւն ունէր մարդիկ իրեն փոխանորդ ընելու։

Պ. Որովհետև ինք աշխարհի վրայ տեսանելի կերպով ներկայ չէ, և եկեղեցին տեսանելի սուրբ ընկերութիւն մը հաստատեց. անիկայ կառավարելու համար ալ փոխանորդաբար տեսանելի գլուխ ըլլալ սահմանեց։

69. Հ. Եկեղեցւոյ գլուխ ըլլալու փո-

խանորդութիւնը, որ առաքելոց տրուած էր, եւ քրիստոնեայ անցաւ։

Պ. Առաքելոց ամէն մէկուն հաստատած աթոռը նստող յաջորդին. այսպէս, Հայաստանեայց եկեղեցւոյ գլուխն է հայոց սրբազան Կաթուղիկոսը։ Յունաց եկեղեցւոյ գլուխը Կոստանդնուպոլսի յունաց Պատրիարքն է։ Հռոմէականներունը Հռոմայ Հայրապետը. ուրիշ քրիստոնեայ ազգաց ալ իրենց Կաթուղիկոսը։

70. Հ. Այս զանազան ազգերը՝ որ մէկ ընդհանրական եկեղեցի կը կազմեն, իրարմէ ինչո՞վ կտարբերին։

Պ. Եկեղեցւոյ խորհուրդները և ծիսական արարողութիւնները կատարելու կերպով։

ԳԼՈՒԽ Զ.

71. Հ. Եկեղեցւոյ խորհուրդները ի՞նչ են։

Պ. Սրտաքին սրբարար նշաններն են, որ Քրիստոս տէրն մեր սահմանեց՝ ընդունողներուն աստուածային շնորհ և արաւնութիւն ժառանգել տալու համար։

72. Հ. Խորհուրդները քանի՞ հատ են։

Պ. Ութն. մկրտութիւն. դրոշմ. ապաշխարութիւն. հաղորդութիւն. ձեռնադրութիւն. պսակ. և վերջին օծումն։

73. Հ. Այս խորհուրդները ի՞նչ կերպով կը կատարուին։

Պ. Ամէն մէկ խորհուրդի յատուկ արարողութիւններ կան սահմանած ամէն աղդի եկեղեցւոյն մէջ. և երեք խորհուրդը՝ մկրտութիւն. դրոշմ. և ձեռնադրութիւն՝ մինակ մէկ մէկ անգամ կը տրուին. մընացածները քանի պէտք ըլլայնէ կը կրկնուին։

74. Հ. Մկրտութիւնն ի՞նչ է։

Պ. Քահանայն քրիստոնեայ ըլլալու անձը կառնէ, և "մկրտի Ծառայս Աստուծոյ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ" ըսելով մինակ երեք անգամ ջուրը կը խօթէ կը հանէ։

75. Հ. Մկրտութիւնը ի՞նչ շնորհ և արտօնութիւն կուտայ։

Պ. Մկրտուողը Ադամէն ժառանգած մեղքէն կազատի. Քրիստոսի մահուան արդիւնքներուն հաղորդ կըլլայ, յաւիտենական կենաց ժառանգ կը դրուի, քրիստոնէայ կոչուելու և եկեղեցւոյ ան-

դամ և մէկալ խորհուրդներուն ընդունակ ըլլալու արժանաւորութիւն կստանայ։

76. Հ. Այս շնորհքները ամէն մկրտուածները կընդունի՞ն։

Պ. Այո՛, միայն թէ յաւիտենական կենաց իրաւք ժառանգ ըլլալու համար հա՛րկ է եկեղեցւոյ հաւատքէն չզատուիլ, և Աստուծոյ եկեղեցւոյ պատուէրները կատարել։

77. Հ. Դրոշմն ի՞նչ է։

Այն խորհուրդն է որ՝ քահանայն մկրտուած անձին ճակատը և աչքը և քիթը և բերանը և ականջը և կուրծքը և կրծունակը և ձեռքը և ոտքը սուրբ մեռոնով կօծէ յանուն Յիսուսի Քրիստոսի, ուստի կնիք ալ կըսուի այս խորհուրդս։

78. Հ. Այս խորհուրդս առնողը ի՞նչ շնորհք՝ կընդունի։

Պ. Քրիստոնէական հաւատքը յայտնի պաշտելու համար ամէն վտանգ յանձն առնելու արիութիւն կըստանայ. և դիւական փորձութեանց պատերազմներու դէմ դընելու զօրութիւն կըզդենու։

79. Հ. Աղաչխարութիւնն ի՞նչ է։

Պ. Այն խորհուրդն է որ՝ քահանայն

իրեն կատարելապէս խոստովանող մեղաւորին մեղքերը՝ Աստուծմէ առած իշխանութիւնովը ձեռքն անոր գլուխը դնելով և ողորմեացի ըսելով կը քաւէ։

89. Հ. Կատարելապէս խոստովանելը ի՞նչպէս կըլլայ։

Պ. Խոստովանութիւնը կատարեալ ըլլալու համար չորս պայման կայ։

81. Հ. Առաջին պայմանը ո՞րն է։

Պ. Մեղաւորը զինքը սատանայի գերութենէն ազատող փրկչին ապերախտ գըտնուելուն մեղքովը անոր աչքէն իյնալուն վրայ սրտանց ցաւիլ և տրտմիլ. որ է Զղջումն։

82. Հ. Երկրորդ պայմանը ո՞րն է։

Պ. Հաստատ մտքին մէջ դընել որ ամէն մեղքերէն և անոնց պատճառներէն փախչի և զգուշանայ. որ է Առաջադրութիւն։

83. Հ. Երրորդ պայմանը ո՞րն է։

Պ. Գործած մեղքերուն մէկն ալ չըպահելով ամէնը պարագայներովը քահանային պատմել. որ է Խոստովանութիւն։

84. Հ. Թէ որ բան մը մոռնալով չըսէ նէ, խոստովանութիւնը լման չըլլար, և

թողութիւն չը գտներ։

Պ. Թէպէտ խոստովանութիւնը լման չըլլար, բայց պակաս մնալը իր ուղելովը չըլլալուն համար թողութիւն կը գտնէ այն պայմանով որ մոռցածը միտքն եկած ատենը խոստովանի։

85. Հ. Զորրորդ պայմանը ո՞րն է։

Պ. Քահանային պատուիրած բարեպաշտութեան գործերը կատարել. և անոր հրամանին հնազանդելով անձնական հաճոյքէն և դիւրութենէն ժամանակ մը ետ կենալ. որ է Ապաշխարութիւն։

86. Հ. Այս խորհուրդը ի՞նչ շնորհք կուտայ ընդունողին։

Պ. Աստուծոյ հետ կը հաշտուի. իր մեղքերը սրբուելով անկէց ետքը եկեղեցւոյ ո՛ր խորհուրդն ընդունի նէ՝ անոր հետ տրուած շնորհք՝ ալ ընդունելու արժանի կըլլայ։

ԳԼՈՒԽ Է,

87. Հ. Հաղորդութիւն ի՞նչ է։

Պ. Քրիստոսի տեառն մերոյ կենարար սուրբ մարմնոյ և արեան խորհուրդն

. Է. որ սուրբ Պատարագ ալ կըսուի :



88. Հ. Ի՞նչպես կը կատարուի :

Պ. Քահանայն եկեղեցւոյ սահմանած աղօթքներովը հացն ու գինին սուրբ Սեղանին վրայ Աստուծոյ կընուիրէ, և Քրիստոսի տեառն մերոյ այս խորհուրդս սահմանած կէտին ըսած աստուածային խօսքը յիշեցնելէն ետքը, Հոգին սուրբ կը կոչէ. որով նոյն հացն ու գինին Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն կըլլան :

89. Հ. Քրիստոսի այն աստուածային խօսքը ո՞րն է :

Պ. Քրիստոս տերն մեր վերջին ընթրեաց գիշերն հացն ու գինին ձեռքն առած՝ Այս է մարմին իմ, և Այս է արիւն իմ ըսելով իրեն իսկական մարմին և արիւն փոխարկեց. նոյն աստուածային խօսքին զօրութեամբը և հոգւոյն սրբոյ ներգործութեամբը քահանային նուիրածին ալ իսկ և իսկ նոյն փոխարկութիւնը կըլլայ։

90. Հ. Այս խորհուրդս ընդունողին ի՞նչ շնորհ կտրուի։

Պ. Արժանապէս հաղորդուողը Քրիստոսի հետ կմիանայ, և անոր չարչարանաց և մահուանը զօրութեամբ մարդոց համար ստացած ամեն արդիւնքները կվայելէ։

91. Հ. Արժանապէս հաղորդուիլը ի՞նչպէս կըլլայ։

Պ. Մեղքի մէջ ըլլալու չէ և ունեցած մեղքերէն առաջուց ապաշխարութեան խորհրդով սրբուելու է։

92. Հ. Քրիստոնեայ մը խոստովանելէն և հաղորդուելէն ետքը նորէն մեղք գործէ նէ՝ կըրնա՞յ նորէն ապաշխարութեան և հաղորդութեան խորհուրդներն ընդունիլ։

Պ. Այո՛. որովհետև Աստուած մարդասերէ՝ զղջացողին զղջումը միշտ կընդունի։ Ուստի այս խորհուրդներս քանի որ պէտք ըլլայ նէ՝ տրուելու են։

93. Հ. Ձեռնադրութիւնն ի՞նչ է։

Պ Եկեղեցւոյ կերպ կերպ պաշտօնները կատարելու ընտրուած մարդոցը կամ գլուխնուն վրայ ձեռք դնելով միայն, կամ օծելով ալ նոյն պաշտօններուն յատկացընելու խորհուրդն է։

94. Հ. Այս խորհուրդը ի՞նչ շնորհ կուտայ։

Պ. Ամեն պաշտօնին յատուկ արտօնութիւնները կուտայ, որ անոր ձեռքովը այն գործը օրինաւորապէս կկատարուի. և այս արտօնութիւնը չունեցողը նոյնը գործէ նէ անվաւեր և ապօրինաւոր կըլլայ։

95. Հ. Այժմ ձեռադրուածներ ինչո՞ւ չեն օծուիր,

Պ. Օծումը այն աստիճանի հասած-ներուն կըլլայ որ սուրբ խորհուրդները կատարելու իշխանութիւն կունենան։ Իսկ միւս-ները անոնցմէ ըստոր աստիճան ունենալուն համար առանց օծման միայն ձեռք դնելով կօրհնուին։

86. Հ. Ուրեմն ձեռնադրութիւնը քանի՞ մը աստիճան է։

Պ. Այո՛. և անոր համար Կարգ ալ կըսուի. վասն զի եկեղեցւոյ պաշտօններն ալ աստիճան աստիճան են. և երկու կարգի կը բաժնուի. մէկը Փոքր և միւսը Սուրբ։

97. Հ. Փոքր աստիճանները որո՞նք են։

Պ. Ասոնք. Դռնապանութիւն. Ընթերցողութիւն. Երգմնեցուցչութիւն. և Զահընկալութիւն։ Այս աստիճաններն առնողները Դպիր կըսուին։

98. Հ. Սուրբ աստիճանները որո՞նք են։

Պ. Կիսասարկաւագութիւն Սարկաւագութիւն. Քահանայութիւն. Եպիսկոպոսութիւն և Կաթուղիկոսութիւն։

Ասոնց առաջին երկուքը սուրբ խոր-

հրդեղ սպասաւոր, և ետքի երեքը՝ կատարողն են. ուստի միայն այս վերջին երեքը կօծուին։

99. Հ. Հապա վարդապետները ի՞նչ են։

Պ. Կրօնաւոր և չկարդուած քահանայ են, որ կրօնաւորութեան նշան վեղար ունին Եպիսկոպոսէն յատուկ օրհնութիւնով առած. և զատ արարողութեամբ և աղօթքներով դաւազանի իշխանութիւն առնելով քարոզ տալն ալ ասոնց յատուկ է։

ԳԼՈՒԽ Ը։

100. Հ. Պսակը ի՞նչ է։

Պ. Եկեղեցւոյ այն խորհուրդն է՝ որ քահանայն մէկ այր մը և մէկ կին մը հաստատ պայմաններով և կրօնքին պահանջած կերպով կը զուգէ, սահմանեալ կարգը կատարելով. որ անկէց ետքը չեն կրնար զատուիլ։

101. Հ. Պասկի համար կրօնքին պահանջած կերպը ո՞րն է։

Պ. Մէկ մը, որ պասկուելու անձինքը իրարու աղգականութեան կամ խնամութեան կամ կնքահայրութեան կողմէն մօտ ըլլալու չեն։ Եւ երկրորդ, առաջնորդին հրամանաւը՝ և ըստ կանոնաց սահմանուած օրերը պասկուելու են Եկեղեցւոյ մէջ։

102. Հ. Ուրեմն ամեն օր պասկ չըլլար։

Պ. Զէ՛. տէրունական օրերը և պահոց օրը չըլլար. ուրիշ օրեր ալ առանց սուրբ պատարագի ատեն կըլլայ, ինչպէս որ խորհրդոյս արարողութիւնն ալ կը ցուցընէ։

103 Հ. Եկեղեցիէն դուրս պասկ ընելը խորհրդոյն ճնաս ունի՞։

Պ. Օրէնքը եկեղեցւոյ մէջ կատարել է. հարկը պահանջէ նէ՝ տան մէջ ալ կըլլայ. բայց հանդիսիւ կատարուելու է որ պասկեաններուն ըրած պայմաններուն վկայներ գտնուին։

104. Հ. Ի՞նչ պայման են ատոնք։

Պ. Իրարու անհաւատարմութիւն չընել. և քանի՛ որ երկուքն ալ կենդանի

են՝ իրարմէ չզատուիլ և ուրիշ մը չառնել։

105. Հ. Պատկի խորհրդով ինչ շնորհք կընդունուի։

Պ. Աշխարհի նեղութեան մէջ համբերութեամբ իրարու օգնական ըլլալ. ողջախոհ և մաքուր ապրիլ. և ծնած զաւակները քրիստոնէաբար կրթել և մեծցընել։

106. Հ. Վերջին օծումն ինչ է։

Պ. Այն խորհուրդն է որ քահանայները ծանր հիւանդներուն վրայ սուրբ աւետարան և աղօթք կը կարդան. սուրբ խաչով կամ սրբոց մասունքներով խաչահանդիսա կընեն. և արձակման աղօթքը կը կատարեն։

107. Հ. Օծումն ըսելով ասոնք կը հասկըցուին։

Պ. Զէ՛. վերջին կէսը հասած հիւանդին աչքը և ականջը և քիթը և բերանը և ձեռքը և ոտքը յատկապէս օրհնած իւղով օծել կայ։

108. Հ. Հապա հիւանդներուն ինչու չեն ըներ այդ օծումը։

Պ. Օծումը խափանելու մանաւոր պատճառներ եղեր են. բայց աղօթքները

և խաչահանդիսանները անխաբան կատարուելու են։

109. Հ. Այս խորհուրդը ի՞նչ շնորհք կը բերէ։

Պ. Հիւանդին կարողութիւն կուտայ հիւանդութիւն և մահուան նեղութիւններուն անարատունջ համբերելու, խիղճը կարթընցընէ՝ որով հոգին կը զօրանայ և աշխարհ սիրելէն կը պնդի. յաւիտենական կենաց փափաքը կաւելնայ։

110. Հ. Հիւանդին մեղքերն ալ այսխորհրդովս կմաքրուի՞ն։

Պ. Խոստովանած մեղքերուն մընացորդ բիծերը կը սրբուին. թեթեւ մեղքերը կը մաքրուին. բայց ծանրերուն համար ապաշխարութենէն զատ դեղ չկայ։

111. Հ. Ուրեմն քանի՞ մի տեսակ մեղք կայ։

Պ. Այո՛. երեք տեսակ է. սկզբնական. մահացու և ներելի։

112. Հ. Սկզբնական մեղքը ո՞րն է։

Պ. Ադամայ և Եւայի գործած և անոր բոլոր սերնդոցը անցած մեղքն է. որ մինակ մկրտութեան խորհրդոյն շնորհօքը կը սրբուի։

113. Հ. Մահացու մեղքը ո՞րն է։

Պ. Գիտնալով Աստուծոյ և Եկեղեցւոյ պատուիրաններուն դէմ գործուած մեղքն է. որով մարդ իր կիրքն ու կամքը Աստուծոյ հրամանէն վեր կը դնէ. և Աստուծոյ աչքէն ինկալով հոգեւորապէս կը մեռնի։ Անոր համար ասանկ մեղքերը մահացու են։

114. Հ. Ներելի մեղքն ո՞րն են։

Պ. Պատուիրաններուն դէմ պատահելու պակասութիւններէն մարդկային տկարութեամբ չզգուշանալ, և ձեռքէն եկած բարի գործքի մը զանցառութիւն ընել։ Ասոնք հոգին տկարացընեն ալ՝ հոգեւոր մահ չեն պատճառեր։

ԳԼՈՒԽ. Բ.

115. Հ. Աստուծոյ պատուիրանքները ո՞րն են։

Պ. Ասոնք են՝ որ Աստուած նախ Ադամայ տուաւ բերնով, և ետքը Մովսէս մարգարէին՝ գրով. ասոնք պահելու ամեն մարդ պարտական է։

116. Հ. Քանի՞ են այս պատուիրանները։

Պ. Տասն են. անոր համար տասնաբանեայ պատուիրանք կամ օրէնք կըսուին։

117. Հ. Առաջին պատուիրանը ո՞րն է։

Պ. «Ես եմ տէր Աստուած քո որ հանէ զքեզ յերկրէն Եգիպտացւոց 'ի տանէ ծառայութեան, մի՛ ևս եղիցին քեզ աստուածք բաց յինէն»։

118. Հ. Ի՞նչ կնշանակէ այս պատուիրանը։

Պ. Աստուած Իսրայէլացւոց ազգը Եգիպտացիներուն գերի ըլլալէն ազատելուն փոխանակ կուզէ որ զինքը միայն պաշտեն. և իրմէ զատ ուրիշ մը աստուածային զօրութեան և կարողութեան տէր

չգիտնան։

119. Հ. Ուրեմն այս պատուիրանը միայն Իսրայելացւոց համար է, որոնք գերութենէ ազատեց Աստուած։

Պ. Զէ՛. Աստուծոյ բարիքը չըվայելող մարդ չկայ. մանաւանդ որ բոլոր մարդկային ազգը սատանայի գերութենէ ազատելու համար նոյն ինքն Որդին Աստուծոյ աշխարհ եկաւ։ Ուստի ամէն մարդկպարտաւորի այսքան բարիք շնորհող մի Աստուածը միայն պաշտել արժանապէս։

120. Հ. Աստուած արժանապէս պաշտելու համար ի՞նչ ընել պէտք է։

Պ. Մի՛շտ անկեղծ սրտով և ուղիղ մտօք իրեն երկրպագութիւն մատուցանել. կատարեալ հնազանդութեամբ հրամայած պատուէրները կատարել. և մեր օգտին և բարութեանը համար բանեցուցած գործիքները և շնորհած միջնորդները պատուելով գինքը փառաւորել։

121. Հ. Այդ գործիքները ո՞րն են։

Պ. Թէպէտ Քրիստոսի տեառն մերոյ սուրբ մարմնոյն գրպած բանները ամենն ալ ասանկ են. ինչպէս են սուրբ խանձարուրը. սուրբ պատմուճանը. սուր

Դատաստանը սուրբ փուշ պսակը. սուրբ բեւեռները. սուրբ Գեղարդը եւայլն. բայց ամենէն դերագանց է սուրբ Խաչը։

122. Հ. Սուրբ Խաչն ինչո՞ւ ամենէն դերագանց է։

Պ. Վասն զի Քրիստոսի տեառն մերոյ մահուամբ մարդոց փրկութիւնը սուրբ խաչին վրայ եղաւ և անոր աստուածային արիւնը սուրբ խաչին վրայ թափուեցաւ. անոր համար կենաց փայտ կըսուի։

123. Հ. Կենաց փայտը ատոր համար պատուեմք. բայց ոսկիէ և արծաթէ և ուրիշ նիւթերէ շինուած խաչերը ի՞նչու կը պատուեմք։

Պ. Վասն զի բուն սուրբ խաչին յիշատակը մեր մըտքին մէջ կնորոգեն, և անոնց եղած յարգը և երկրպագութիւնը բուն կենաց փայտին և անով Քրիստոսի է. ատոր համար ալ այն խաչերը սուրբ մեռոնաւ օծելով կը սրբանան։

124. Հ. Երեսնիս խաչակնքե՞լն ալ սուրբ խաչին պատիւ է։

Պ. Այո՛. խաչակնքելը սուրբ խաչին նշանը մեր դէմքին վրայ ցուցնել է, որով կը դաւանիմք թէ մեր փրկութիւնը և ամէն հոգևոր շնորհքները սուրբ խաչիւ պարգևած են. սատանայի ուժն ալ անով կոտրած է. ուստի նոյն նշանովը ամենը փորձութիւններէն ալ կազատիմք։

125. Հ. Մեր հոգևոր բարւոյն համար Աստուծոյ շնորհած միջնորդներն որո՞նք են.

Պ. Ամենէն առաջինը և գերագոյնը՝ սուրբ Աստուածածին կոյսն է, որմէ Քրիստոս Աստուած մարմին առաւ.

անկէց եւաքը Հրեշտակները եւ ուրիշ սուրբերն են։

126. Հ. Հրեշտակները ի՞նչպէս միջնորդ եղան։

Պ. Քրիստոսի սեռաւն մերոյ ազնուականի դորձերուն պաշտօնեայ եղան, եւ փրկութիւն ժառանգելու մարդոց ըստ պատուոյրութեան կը զրկուին Աստուծոմանէ։ Սմին մարդ ալ զինքը անարժանութիւն ինքանելէ ազատելու համար պահապան հրեշտակ մը ունի։

127. Հ. Սուրբերը ի՞նչպէս միջնորդ եղան։

Պ. Ամենք սուրբ հաւատք եւ փրկ-

կուլթեան ճամբայ նորվեցուցին մերնախնիք-
ներուն, որոց հետեւելով մեք ալ կը փըր-
կուինք։ Ոմանք հաւատքի համար արիւն
թափելով անոնց վկայութեամբը սուրբ
հաւատքը հաստատեցաւ, ոմանք ալ իրենց
սուրբ վարքովը մեզի օրինակ եղան։

128։ Հ. Այս սուրբերը ինչպէս պատ-
ուելու է։

Պ. Անոնց տօնին սահմանուած օ-
րերը սուրբ եկեղեցի երթալով, անոնք առ
Աստուած բարեխօս բռնելով, և անոնց պատ-
կերը և մասունքը պատուելով։

129։ Հ. Սրբոց պատկերը ինչո՞ւ կը
պատուեմք։

Պ. Սրբոց հոգիքը միշտ զԱստուած
տեսնելով մեզի համար կը բարեխօսեն, և
անոնց միջնորդութեամբը Աստուծմէ ա-
ռած շնորհնիս՝ անոնց պատկերը տեսնե-
լով, շնորհատու Աստուածը կը փառա-
ւորեմք։

130։ Հ. Պատկերի տրուած պատիւը
ինչպէս սուրբերուն և անոնց միջնորդու-
թեամբը Աստուծոյ կը վերաբերի։

Պ. Ինչպէս որ թագաւորի առա-
ջակայ եղողները պատուելը նոյն իսկ թա-

գաւորին փառք ու մեծարանք է, նոյնպէս ալ սուրբերուն ի՛նչ կերպով պատիւ տրուի նէ, միշտ զանոնք ընտրող և ընդունող Աստուծոյն է։ Աստ համար անոնց կենդանագիրը սուրբ մեռոնի օծմամբ սրբագործելով Աստուծոյ հրաշագործ զօրութիւնը վրայնին հանդիպիլ կը խնդրուի, որ անով ալ նոյն ինքն Աստուած փառաւորի։

131. Հ. Սրբոց մասունքը ինչո՞ւ կը պատուեմք։

Պ. Վասն զի այն սուրբերուն մարմիններն են՝ որ Աստուած անոնցմով իր զօրութիւնն ու բարութիւնը ցուցուցած է, ասոնք ճանչնալու և ասոնք շնորհող Աստուածը փառաւորելու, և նոյն սրբոց մեզի համար բարեխօս ըլլալը խնդրելու համար է. և ոչ թէ մեզաց թողութիւն կը յուսամք անոնցմէ։

132. Հ. Սրբոց մասունքովը և պատկերովը ի՞նչ բարութիւն կընէ Աստուած։

Պ. Շատ հրաշքներ ըրած է և միշտ կընէ. Եղիսէ մարգարէին ոսկերներուն դըպչելով մեռեալ անգամ կենդանացած կպատմէ սուրբ գիրքը. և սուրբ պատկերներով

պէտպէս բժշկութիւն ըլալը կը վկայեն ականատես պատմագիրք։

ԴԼՈՒԽ Ժ

153. Հ. Տաճարանեայ երկրորդ պատուիրանքը ո՞րն է։

Պ. «Մի՛ արասցես քեզ կուռս»։ Դուն քեզի կուռք չշինես։

134. Հ. Կուռք ըսուածը ի՞նչ է։

Պ. Քրիստոսի աշխարհ գալէն առաջ մարդիկ ճշմարիտ Աստուածը չճանչնալով, իրենց վախ և զարմանք և շահ պատճառող բաներուն վրայ՝ իբրեւ թէ աստուածական զօրութիւն կայ կարծելով, անոնց նմանութիւնը կշինէին քարէ կամ փայտէ կամ ուրիշ նիւթերէ. և անոնք Աստուծոյ տեղ կպաշտէին. ասանկ պաշտուած բաները կուռք կըսուին և պաշտողները կռապաշտ։

135. Հ. Հիմայ որ կուռք չկայ, այդ պատուէրը աւելորդ չը՞սեպուիր։

Պ. Թէպէտ կռապաշտներուն պաշտածին պէս չկայ. բայց ուրիշ տեսակ կուռքեր կան, անոնք պաշտելը կարգիլէ այս պատուէրը։

136. Հ. Աչդ կուռքերն ի՞նչ են։

Պ. Մարդիկ Աստուծմէ յոյսերնին դիրցընելով ի՞նչ բանի վրայ յաջողութեան յոյսերնին դրած են նէ՝ անիկայ անոնց կուռքն է, Աստուծոյ տեղ անիկայ կը պաշտեն։

137. Հ. Աչդպէս յոյս ի՞նչ բանի վրայ կը ընայ դրուիլ։

Պ. Ոմանք հարստութեան վրայ յոյս կդնեն, արծաթապաշտ են. ոմանք մարդոյ պաշտպանութեանը կապաւինին՝ մարդապաշտ են. ոմանք կախարդներու ձեռօք դեւերուն օգնութեանը կը դիմեն, դիւապաշտ են։ Ոմանք իրենց կամքը Աստուծոյ կամքէն վեր կը բռնեն, կամապաշտ են. ոմանք իրենց մարմնական հեշտութենէն չեն զատուիր, մարմնապաշտ են, եւայլն։

138. Հ. Ցանկանանայ երբոբդ պատուէրը ո՞րն է։

Պ. «Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո 'ի վերայ անտեսաց»։ Պարապ բաներու վրայ Աստուծոյ անունը բերանդ չառնես։

139. Հ. Աստվ ի՞նչ ընելու կպարտաւո-

ըիմք։

Պ. Սուտ և պարապ տեղ զԱստուած չյիշել. անիկայ վկայ բռնելով երդում չընել. ճշմարիտ խօսելու անանկ որովիլ որ երդում ընելու կարօտ չըլլամք։

140. Հ. Բնաւ երդում ընելու չէ՞։

Հ Դատաստանի մէջ դատաւորին հրամանովը արդարութիւնը յայտնելու համար երդում ընել կըլլայ՝ այն ալ թէ որ հոգեկորուստ ՁԼատու պատճառ չը տրուի նէ. ուրիշ ամեն պարագայներու մէջ արգիլուած է։

141. Հ. Տանաբանեայ չորրորդ պատուէրը ո՞րն է։

Պ, ,,Պատուեա՛ զօր շաբաթուն,,։ Շաբաթ օրը պատուէ։

142, Հ. Շաբաթ օրը ուրիշ օրերէն չզատելով ի՞նչպէս պատուած կըլլամք։

Պ, Շաբաթ օրը պատուելը՝ Աստուծոյ աշխարհս ստեղծելէն դադրելուն յիշատակին համար է։ Առաքեալները՝ Քրիստոսի յարութիւնը և Հոգւոյն սրբոյ տալուստը պատուելու համար կիրակիի փոխեցին։ Եւ մեք ալ շաբաթուն պատիւը կիրակիին տալ կպարտաւորիմք։

143, Հ, Կիրակին ի՞նչպէս պատուելու եմք։

Պ, Աշխարհային գործերէն եւ կենալով. եկեղեցի երթալով, հասարակաց հետ աղօթելով. քարոզ լսելով. սուրբ Պատարագ տեսնելով, և ժամանակնիս հոգևոր գործերով անցնելով։

144, Հ, Ուրեմն կիրակի օրը մարդու հետ տեսնուելու չէ։

Պ, Այդպէս հարկ չկայ, մանաւանդ անմեղ կերպով մարդու հետ տեսնուիլը եղբայրսիրութիւն է, և այս ալ բարեգործութիւն մըն է։

ԳԼՈՒԽ ԺԱ

145. Հ. Տասնաբանեայ պատուիրանին հինգերորդը ո՞րն է։

Պ. «Պատուեա՛ զհայր քո և զմայր»։ Հայրդ ու մայրդ պատուէ՛։

146. Հ. Ասով ի՞նչ բանի կը պարտաւորիմք։

Պ. Մեր մարմնաւոր ծնողքներէն դատ հոգեւոր ծնողքնիս և երախտաւորնիս ալ պատուելու կպարտաւորիմք։

147. Հ. Հոգեւոր ծնողքնիս ո՞վ են։

Պ. Մեզի հոգեւոր և բարի բաներ սորվեցնողներն են, և սասանկ են խոստովանահայրները, վարժապետները և բարի խրատ տուող ամեն աստիճանի մարդիկ։

148. Հ. Երախտաւորները ո՞վ են։

Պ. Մեզ մարմնաւոր վնասներէ պահող և օգուտնիս հոգացող բարեխնամութագաւորը իր նախարարներովը, ազգային կառավարութեան գլուխները, մեզի արհեստ սորվեցնող վարպետները և մեզի ամեն տեսակ աղէկութիւն ընողները։

149. Հ. Վեցերորդ պատուիրանը ո՞րն է։

Պ. «Մի՛ սպանաներ»։ Մարդ մի մեռցներ։

150. Հ. Այս պատուէրով ի՞նչ բանի կը պարտաւորիմք։

Պ. Մարդ չմեռցնելու, որուն ըստ աշխարհի պատիժը մահ է։ Բայց մարդ մեռցնելու ուրիշ տեսակներ կան, որոյ մարդկային դատաստանը պատիժ չտար ալ նէ, աւելի սոսկալի պատիժներն հանդերձեալ աշխարհը կը մնայ։

151. Հ. Ո՞րն են ատոնք։

Պ. Բամբասելով կամ զրպարտելով

անուն աւրել, դէշ խօսելով սիրտ ծակել, ապրուստի արգելք ըլլալ՝ մէկին շահելու միջոցը ձեռքէն յափշտակել, և մէկին մեռնելուն փափաքիլ։

152. Հ, Ինքը զինքը սպաննելն ալ մեղք է։

Պ, Այո՛, և անքաւելի ալ է, որովհետեւ մեղքին ապաշխարանքը կրելու ժամանակ չունենար։

153, Հ, Ասանկներուն ըստ աշխարհի՞նչ պատիժ կը տրուի։

Պ, Եկեղեցական եւ աշխարհական օրէնքները սահմաններ են որ քրիստոնէական թաղումէ՛ և տեղ կայ որ քաղաքանէն ալ կը զրկուին, վրանին թաղման կարգ և պաշտօն և պատարագ չըլլար։

154, Հ, Եօթներորդ պատուիրանքը ո՞ըրն է։

Պ, «Մի՛ շնար»։ Շնութիւն մի՛ ըներ։

155, Հ, Ասով ինչի՞ կպարտաւորիմք։

Պ, Պատկի խորհուրդն ընդունելէն թէ՛ առաջ թէ՛ ետքը՝ նոյն խորհրդով հրամայուածէն դուրս կամ անոր դէմ չմեղանչել։

156, Հ, Ուրթերորդ պատուիրանը օ՞րն է։

Պ, «Մի՛ գողանար»։ Գողութիւն մի՝ ըներ։

157. Հ. Ասով ինչի՞ կը պարտաւորիմք։

Պ. Ուրիշին ըստացուածքը մեղի չանցընել. այսինքն տիրոջմէն գաղտուկ բան չառնել. սուտով մէկուն ըստակը չյափշտակել, աղէկի գնով գէշ բան, կամ աղէկը արժէքէն սուղ չծախել. պակաս չափ և կշիռ գործ չածել. գէշ ստակ չքշել. բանուորին վարձքը չկտրել։

158. Հ. Բանուոր եղողը այս պատուէրիս պարտաւորելու առիթ չունի՞։

Պ. Այն ալ կը պարտաւորի ծուլութեամբ չբանիլ. և բանելու ժամանակ պարապ անցընելով օրն իրիկուն չընել աւուրչէք մը աւելի շահելու համար։

ԳԼՈՒԽ ԺԲ

159. Հ. Տասնաբանեայ պատուիրանին ինններորդը օ՞րն է։

Պ, «Մի՛ սուտ վկայեր»։ Սուտ վկայութիւն մի՛ ըներ։

160. Հ. Ասով ի՞նչ բանի կը պարտա-

ւորիմք։

Պ. Չէ՛ թէ միայն դատաստանի առաջ, այլ ո՛ւր որ ըլլայ նէ՝ մէկու մը համար սուտ վկայութիւն տալու չէ՛. չգիտցած բանին վրայ խօսելու չէ՛. ուրիշին գաղտնի դիտաւորութիւնը դատելու չէ՛։

161. Հ. Ցանկերորդ պատուիրանը ո՞րնէ։

Պ. «Մի՛ ցանկանար տան ընկերի քո և մի՛ ամենայն ընչից նորա»։ Ընկերիդ տանը և ուրիշ ինչքերուն մէկին ալ աչք մի՛ տնկեր։

162. Հ. Այս պատուէրով ինչի՞ կը պարտաւորիմք։

Պ. Մեր չունեցած բանն որ ուրիշը ունի՝ անոր աչք չդարնել. և անիրաւութեամբ ձեռքէն խլելու միտք չբանեցընել. ուրիշին աղէկութեանը չնախանձիլ։

163. Հ. Պատուիրանաց ամենէն գլխաւորն ո՞րն է։

Պ. Սա չորսն են, որոնք ինքն տէրը մեր ցուցուց. Աստուած բոլոր անձով և սրտիւ սիրել։ Մարդիկ իր արձին պէս սիրել։ Իրեն համար ուղածը ուրիշին ընել։ Այսոնք կատարողը բոլոր պատուիրանները կատարած կըլլայ։

164. Հ. Այս պատուէրը կատարելով ինչպէս կըրնայ ամեն պատուիրանք կատարած ըլլալ։

Պ. Բոլոր պատուիրանները, թէ աստուածային թէ եկեղեցական, սոնց մէջ կը բովանդակին. անոնք չկատարողը այս չորսն ալ ճիշդ պահած չըլլար։

165. Հ. Եկեղեցւոյ պատուիրանքները ո՞րոնք են։

Պ. Առաքեալներուն ժամանակէն ընդհանուր եկեղեցւոյն մէջ սահմանուած հինգ պատուէր կայ, որոնք ամեն քրիստոնեայ պարտական են պահելու։

166. Հ. Առաջինը ո՞րն է։

Պ. Գոնէ՛ կիրակի և տօն օրերը եկեղեցի երթալ և սուրբ պատարագ տեսնել։

167. Հ. Երկրորդը ո՞րն է։

Պ. Կիրակի և տօն օրերը մարմնաւոր գործ չընել, խանութ չբանալ. բան չբանիլ և իրեն համար ուրիշը չբանեցնել. այլ աղօթքի և կարդալու և հոգեւոր բաներու և իրարու հետ անմեղ տեսութեան պարապելով անցընել։

168. Հ. Երրորդ պատուէրը ո՞րն է։

Պ. Գոնէ՛ տարին հինգ անգամ հինգ

տաղաւարին՝ քահանային երթալ կատարելապէս խոստովանիլ։

169. Հ, Զորրորդը ո՞րն է։

Պ, Տարին դոնէ երկու անգամ ծընունդին և զատկին արժանապէս սուրբ հաղորդութիւն ընդունիլ։

170, Հ, Հինգերորդը ո՞րն է։

Պ, Եկեղեցւոյն սահմանած օրերը պահք և ծոմ բռնել, և ինչ բան որ այն օրերը ուտելն արգիլուած է՝ չուտել։

171, Հ, Պահք կենալ չկրցողը ի՞նչ ընելու է։

Պ, Կրնայ անանկ տկար անձ մը բժշկին վկայութիւնովը և խոստովանահայր քահանային հրամանովը ուտել միայն ինչ որ իրեն ինչաս չտար։

Գ՝ ՈՒԽ ԺԳ

172։ Հ, Պատուիրաններուն դէմ դրած ուսածնե՞րն են միայն մահացու մեղք։

Պ, Ամեն մեղք պատուիրանքի դէմ է, բայց անոնց մէջ եօթն գլխաւոր մեղք կան որոյմէ շատ մեղքեր կծագին, մահացու մեղք անունով յատնապէս ա-

նոնք կիմացուին։

173, Հ, Այդ եօթն մահացու մեղքերը ո՞րոնք են։

Պ, Ասոնք են, հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն, և բողջախոհութիւն։

174, Հ, Հպարտութիւնն ի՞նչ է։

Պ. Ինք զինքը մեծ բանի մը տեղ դնել. Աստուծմէ առած աղէկութիւնները իրենմէ կարծել. ուրիշները իրմէ վար սեպել. իր խօսքին սխալը հասկնալէն ետքը ալ յամառիլ մնալ. և այլն։

175. Հ. Այս մեղքիս դէմ ի՞նչ դեղ կայ։

Պ. Խոնարհութիւն, զոր մարդս միտքը դնելու է թէ ինքը ոչինչ է, եւ ինչ աղէկութիւն ունի նէ Աստուծմէ է. և ուրիշներն ալ իրեն պէս մարդ և Աստուծոյ ստեղծուածն են։

176. Հ. Նախանձն ի՞նչ է։

Պ. Ուրիշին եղած աղէկութիւնը չքաշել, և անոր վրայ տըրտմիլ. որկէց կելնէ ուրիշին անունն աւրել և մահուանն անգամ փափագիլ և այլն։

177. Հ. Ասոր դեղն ի՞նչ է։

Պ. Եղբայրսիրութիւն, որ է ուրիշին եղած ՁԼասն ալ աղէկութիւնն ալ իրեն եղածի պէս բրռնելով միշտ անոր աղէկ ըլլալուն և դէշութենէն աղատելուն օգտել։

178. Հ. Բարկութիւնն ի՞նչ է։

Պ. Մէկէն պզտիկ անարդանք մը անդամ կրած աաենը սրրտնեղիլ և անոր ոխ պահել, որկէց մարդասպանութիւն անդամ կծագի։

179. Հ. Ասոր դեղն ինչ է։

Պ. Հեզութիւն. որ է ուրիշներուն մեղի դէմ ըրած պակասութիւններուն երկայնմտութիւն ընել, և մեղի անարդողին կամ ՁԼասողին անյիշատակ ելլալովնեռ։

180. Հ. Ծուլութիւնը ի՞նչ է։

Պ. Իր մարմնական հանգիստը Աստուծոյ կամքէն վեր բրռնելով բարի գործքեր ընելու անհոգանալ։

181. Հ։ Ասոր դեղն ի՞նչ է։

Պ. Արիութիւն. Աստուծոյ կամքը կատարելու հոգւով չափ աշխատիլ որ անպատրաստ գտնուելով հոգւոյ կո-

ըստեան վտանգի մէջ չինուի։

182. Հ. Ազահութիւնն ինչ է։

Պ. Խելքը միտքը սուակ դիզելու տալ, միջոցին արդար կամ անիրաւ ըլլալուն չնայիլ. վաստակածը քովը պահել, որով ոչ ուրիշին և ոչ իրեն օգուտ կըլլայ։

183. Հ. Ասոր դեղն ինչ է։

Պ. Անշահասիրութիւն, որ է արնիրաւ վաստակներէ եւ կենալ. արդարվաստակէն ալ եկեղեցւոյն և ազգի օգտակար բաներուն և աղքատներուն առատ բաժին հանել։

184. Հ. Որկրամոլութիւնն ինչ է։

Պ. Իր որովայնին ծառայելով մարմինը դիրցընելու համար Աստուծոյ պատուէրը զանց ընել։ Գինովցալը, և առանց հիւանդութիւն ունենալու պահք չբռնելը այս մեղքիս կը վերաբերի։

185. Հ. Ասոր դեղն ինչ է։

Պ. Ժուժկալութիւն, որով մարդ իր ախորժած բաներուն չափազանց կամ տարաժամ դորձածութենէն եւ կը կենայ։

186. Հ. Բողձախոհութիւնը ինչ է։

Պ. Յանկութեան կիրքը զսպելէն զրկելով անոր հեռուիլ, և տասնաբանեայ պատուիրանքին եօթներորդին դէմ մեղանչել։

187. Հ. Ասոր դեղն ի՞նչ է։

Պ. Ողջախոհութիւն. որ է ցանկութիւն դրդռող մտածութիւններէ և ամեն պատճառներէ փախչիլ. ծուլութենէ և որկրամոլութենէ մաձապէս զգուշանալ։

ԳԼՈՒԽ. ԺԴ.

188. Հ. Ամեն մեղքէ մէկէն զգուշանալու դեղ մը կա՞յ։

Պ. Այո. և սա չորս բաներուն մտածութիւնն է. որ է մահ. դատաստան. դժոխք. և արքայութիւն։

189. Հ. Մահ ըսածն ի՞նչ է։

Պ. Մարմինը կենդանացնող հոգիին մարմինէն զատուելն է. որ մեռնիլ կըսեմք. որով մարդս անկէց ետքը բան մը ընելու կարող չըլլալով ինչպէս մեռաւնէ, թէ մեղաւոր թէ արդար միշտ անանկ կմնայ։

190. Հ. Դատաստանն ի՞նչ է։

Պ. Այն է որ աշխարհիս վերջը Աստուծոյ հրամանով ամեն մարդու հոգի իր մարմնոյն հետ միանալով յարութիւն առնելէն ետքը՝ Քրիստոս տէրն մեր պիտի գայ, և ամեն մարդու բարի և չար գործքերը դատելով արժանի հատուցում պիտի ընէ։

191. Հ. Դըժոխքն ի՞նչ է։

Պ. Սատանայից համար պատրաստուած յաւիտենական տանջանաց տեղն է, ուր Աստուած պիտի դըրկէ չար գործք ունեցող և առանց գըղջալու և ապաշխարելու մեռնող մարդիկը։

192. Հ. Արքայութիւնն ի՞նչ է։

Պ. Յաւիտեան Աստուծոյ հետ ըլլալով անվախճան փառք և երջանկութիւն վայելելու տեղն է. որ բարի գործք ու-

նեցող, և մեղքերնէն կատարեալ ապաշխարութիւնով մաքրուած մարդիկը պիտի ժառանգեն։

193. Հ. Աշխարհի վայելքներու ընկերժելով ասոնք մոռցերնուս կելլեն. միշտ յիշելու ճարն ի՞նչ է։

Պ. Ամեն ատեն աղօթքով Աստուծոյ օգնութիւնը և շնորհքը խնդրելու համար, որ այդ չորս բանին յիշատակը մեր մտքին մէջ հաստատէ։

194. Հ. Աղօթքով ամեն ուղածնիս Աստուած կուտա՞յ մեզի։

Պ. Այո՛. մեզի հոգեւորապէս օգուտ ընելու կամ հոգեւոր ճնաշէ ազատելու միջոց կամ առիթ ըլլալու ի՛նչ որ ուզեմք նէ մեզնէ չինայեր ամենեւին։

195. Հ. Հապա մարմնաւոր աղէկութիւն մը ուզենք նէ անիկայ չըտար։

Պ. Մարմնաւոր բարիքներ ալ երբ և որչափ մեր հոգեւոր օգտին յարմար տեսնէ նէ, այն ատենը և այնչափ կուտայ։ Ուստի խնդրածնիս տայ ալ նէ՝ չտայ ալ նէ՝ միշտ շնորհակալ ըլլալու համար։

196. Հ. Մեզի օգուտ ընելու, կամ ճնաշ չընելու ի՞նչ բան խնդրելու համար Աստուծմէ։

Պ. Ինչ որ Քրիստոս տէրն մեր առաքեալներուն սորվեցուցած աղօթքին մէջ ուանդեց՝ մեր ընելիք խնդրուածները անոնց յարմար ըլլալու են։

197. Հ. Քրիստոս տէրն մեր ի՞նչ աղօթք սորվեցուց առաքեալներուն։

Պ. Այս աղօթքը, որ Տէրունական աղօթք կըսուի։

Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն։

ՎԵՐՋ

8685

ՎԵՐԻԵՐԱՑԵԱԼ

ՅԱՋԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ

ԺՈՂՈՎՈՅ

1865

9 ≑18

6 .9-a